


Թարիգում	14 դրան
Գաւառներում	20 դրան

Ռուսաստան	4 ռ. 50 կ.
Թուրքիա	50 դրուշ
Եւրոպա	12 ֆրանկ
Ամերիկա	2 տոլար 50 ս.
Յայտարարութիւնների վճարը	
Առաջին երկուսում տողաւորը	10 շահի
Չորրորդ	5 »

ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՐԸ 6 շահի

Խմբագրութեան հասցէ՝ Թաւրիզ
Միտք-ի խմբագրութիւն կամ Tauris (Perse)
Rédaction du journal «MITK»



ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱՋԳԱՅԻՆ — ՀԱՍԱՐԱԿԱՆ — ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԲԱՑՈՒԱԾ ԵՒ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ՄԻՏԿ“

Ազգային — Հասարակական — Գրական և Քաղաքական

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

1912 թուի համար.

Թարիգում տարեկան	14 դրան
„ վեցամսեայ	8 „
„ երեք „	5 „
Գաւառներում տարեկան	20 դրան
„ վեցամսեայ	12 „
„ երեք „	7 „

ԱՐՏԱՍԱՀԱՄԱՆ

Ռուսաստան	4 ռ. 50 կ.
Եւրոպա և Եգիպտոս	12 ֆրանկ
Տաճկաստան	50 դրուշ
Ամերիկա	2 տոլար 50 սէնթ

Յայտարարութիւններ ընդունուած են ամեն լեզուներով. յայտարարութեանց համար վճարում են իւրաքանչիւր տողաւորին՝ (պետիտ) առաջին երեսի վրայ 10 շահի, վերջին երեսի վրայ 5 շահի: Ետընակական յայտարարութեանց համար առանձին պայման:

Խմբագրի հետ տեսնուել կարելի է, չորեքշաբթի և օտոն օրերից բացի, ամեն օր երեկոյեան ժամը 4-5 իւր բնակարանում, տուն Օհանջանի, Թաւրիզ մէլդանում, Ռուսական հիւպատոսարանին մերձ:

Բաժանորդագիրն և յայտարարութիւնների վճարն անպայման ԿԱՆԻՍԿ Հատաւաճառ Թարիգում 6 շահի:

Մեր հասցէ՝ Rédaction du journal „Mitk“ Tauris (Perse)

Հեռագրի հասցէ՝ Rédaction „Mitk“ Tauris.

Խմբագիր — Հրատարակիչ՝
Ալէքսանդր Տէր Վարդանեանց

ՌԻԺԵՂ ԻՇԽԱՆՆԻՔԸԱՆ ԿԱՐԻՔԸ
I
Բաւական շոյում է, անշուշտ, մեր ազգային փառասիրութիւնը գիտնական եւրոպացիների այն կարծիքը, որով մենք հայերս յաճախ անուանուած ենք Արեւելի Հոլանդացիներ կամ Զուիցերացիներ:

Տարաբաղդաբար այդ այդպէս է միայն արտաբնական: Մենք ներքուստ նոյն դանդաղաշարժ, հաւարական գործունէութիւնից խուսափող, կուտուրական ձեռնարկները իրենց սաղմի մէջ սպանող, մեր զգուշի ու բնական իշխանութեան զգուշութեամբ զգուշացող, որ մենք էլ հպարտանում ենք, քաղաքակրթութեան մեր զգուշութեամբ:

Տեսնողներ ներկայացնելով մեզ. Այն միջոցները, որոնք գործադրուած են արեւմտում և առաջ են բերում ժողովրդական միահեծանութիւն, որի մէջ և հասարակական բարօրութիւն, մեզանում — որ իբրև թէ կրկնակուս գնում ենք եւրոպացիների յետևից — բոլոր այդպիսի միջոցները գործադրուած են, կարծես, եղած ժողովրդական անշուշտ իրաւունքներն էլ խորտակելու և առանցիկութեամբ մեզ դէպի հասարակական անաւերտ (անիշխանութիւն):

Խօսքներ օրինակով. Յայտնի է մեր ընթերցողներին, որ Գարսկաստանցիներս — բուն Ատրպատականցիներս — ունինք մի ժողովրդական ներկայացուցչութիւն, որ կոչւում է Ատրպատականի հայոց պատգամաւորաց ժողով կամ թեմական ժողով, որ կուտար-

ուած էր և անցեալ տարի: Այդ ժողովով, իբր թէ, Ատրպատականցիներս աւելի լաւ հիմքերի վրայ պիտի դնէինք մեր ազգային, դպրոցացական, եկեղեցական և հասարակական գործերը. բարեկարգէինք հայկական անարխիայի մատնուած մեր կրթական հիմնարկութիւնները և թաղաւորեցնէինք կարգն ու օրէնքը մեր բոլոր հասարակական գործառնութեան մէջ:

Այդ տեսակէտից անցեալ տարուայ մեր, այսպէս կոչուած, թեմական ժողովը չարդարացրեց իր վրայ դրուած յոյսերը, չըմբռնեց իր դերը և չկանգնեց իր կոչման բարձրութեան վրայ. չտեսաւ ոչ մի օգտակար և միայն զործ և ինչ՝ յուսահատութեամբ գումարաւոր ժողովներն էլ անցկացրեց անպտուղ վէճերի, ինքնաբնադատութեանց և վարկաբեկիչ քաջաշուկների մէջ:

Թէ ինչու, այդ կտեսնենք յաջորդում:

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՈՄՑ

Չեւնարկելով «Միտք» հրատարակութեան մեր նպատակ չենք ունեցել շահագրգիռական մի գործ սկսել — և դրուած թէ որ և է հայ թերթ, այն էլ Թարիգում, վնասից բացի օգուտ բերած լինի խմբագրին — այլ ցանկացել ենք նպատակ մեր ժողովրդի մտաւոր և բարոյական զարգացման: Ուստի երբ մեր թէ նիւթական, թէ բարոյական, թէ ժամանակն ու հանգիստն ենք զուտ այդ նպատակով, այլ ևս Թարիգի մեր բաժանորդներն ու թերթ ստացողները չպիտի զանաւան իրենց 14 դրանի անշուշտ բաժնեկցիք և մտնեն ինչ-ինչ հաշիւների մէջ և թերթն անհաշիւ թերթ պատկանում է հասարակութեան և հասարակութիւնը պէտք է պիտեանայ պահել նրան իսկ թերթը կպահուի կանխիկ բաժանորդագրութեամբ:

ՄԵԾ ՄԱՐԿԻԿ

Վ. Ստէք շարունակում է Review of Reviews թերթի Փետրուարի տետրակում մեծ մարդոց մասին ծոր կարծիքներ և նոր ցուցակներ առաջ բերել: Առանձնապէս հետաքրքրական են կարծիքներն ու ցուցակը Յրդ. Հարիսոնի, որին Ստէք արդի գրական աշխարհէ ամենից մեծ հեղինակութիւնն է համարում այս խնդրում և որ իբրեւ լաշողել է լուծել անցեալ անգամ մեր ակնարկած մի քանի կրն-

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿԵՆՈՒՆԵՐ

1. Սեզ գրողներից խնդրում է գրեն պարզ, մարտի և անպայման բոլորի առաջին երեսի վրայ:
2. Խմբագրութիւնն իրեն է վերապահում իրաւունք՝ ստացուած յոյսերը փոփոխութեամբ և կրճատումներով հրատարակելու:
3. Մենք միտքում ենք, որ մի ուղղագրական հերձուածը և մեզ ենք վերապահում իրաւունք՝ ստացուած նիւթերը ապել մեր ընդունած ուղղագրութեամբ — ու — ու:
4. Չսպում կարճ յոյսերը շին վերադարձնում: Ուղարկուած և չստացուած երկար նիւթերը յետ ստանալու համար պէտք է ուղարկել պօստի ծախսը:
5. Չի պարտի ոչ մի յոյսում եթէ դա կեղծ անուան հետ միաժամանակ չի կրի յոյսում ազգի իսկական անուն ազգանունը:
6. Բաժանորդները թերթը չստանալու պէտքում չուտով տեղեկացնելու են մեզ, հակառակ դէպքում խմբագրութիւնն իրեն զերծ է համարում պատասխանատուութիւնից:
7. Չսպում յոյսերը համար խմբագրութիւնն բացատրութիւններ չի տալիս:
8. Հասցէները փոխելու համար պէտք մեզ ուղարկել 2 դրան 10 շահի:

հիւնները ու ներկայացնել մեծ մարդոց շատ գոհացուցիչ մի ցուցակ:

Նա նախ նկատում է, որ շատ դժուար է 20 անուանց ցանկի մէջ ամփոփել պատմական հոշակ ստացած մեծ մարդոց և փոքր ի շատ է բաւարար եղբայրացութեան լանդելու համար առաջարկում է հետեւեալ պայմանները.

1. Յիսուս անունը շատ չէ մեր ամբողջ երկրագնդի չորս հոգար տարուայ պատմութեան համար:

2. Պէտք է մի կողմ թողնել բոլոր կենդանի և մօտ ժամանակի մարդոց, հետեւելով Սողոմոնի իմաստուն ասացածին. «Ո՛չ ոքի բարդաւոր մի անուանիր մահից առաջ»: Առնուած մի կամ երկու սեբունդ պիտի անցած լինի, որպէս զի «Մեծ» տիտղոսով պատուելու վճիռ կարողանանք տալ մի մահկանացուի համար:

3. Պէտք է հաշուել առնել ամեն ազգի ցեղի և հաւատի հին և նոր աշխի բնկնող ներկայացուցիչներին:

4. Պէտք է հաշուել առնել մարդկային հանճարի և կարողութեան բոլոր այն ներկայացուցիչներին, որոնք նպատակ են քաղաքակրթութեան զարգացումը յաջողութեամբ:

5. Ի նկատի առնել ոչ այնքան հանճարի փալլը ու անձնական կարողութիւնը, որքան մարդկութեան մտաւորական լուծիւնը:

6. Իւրաքանչիւր տիպի անձնակազմութիւններից վերցնել միայն ամենից բարձր ներկայացուցիչին և այդպէս մեծ համարել նոյն միայն, որոնք առաջինն են նոյն կարգի անձնակազմութեան մէջ:

Ըստ այսմ՝ նոր ժամանակի ամենից հանճարեղ գործարար, Նապոլեօն Բոնապարտը, չի մտնում ցուցակի մէջ, որովհետեւ նա աւելի մեծ չափով չարիք է պատճառել մարդկութեան քան բարիք: Աննի-բալ մեծագոյն գործարար, Պերիկլէս ու Մարկոս Աւրելիոս նոյնպէս, որովհետեւ նոյն ջանքերը ապարդիւն են անցել: Գարսի, Պատմոր, Վազներ, Բիսմարկ և այլն խիստ մօտ ժամանակակից լինելով համար՝ ցուցակի մէջ չեն մտնում: Ուրիշներն ուրիշ տեսակետերով և ապա լուրջ է դալիս 50 մեծ մարդոց հետեւեալ ցուցակը.

Մոլայէս	կրօնների հիմնադիրներ.
Բուդդա	
Կոնֆուցիոս	
Մահմէդ	բարձրագոյն ներկայացուցիչներ նախկին վէպի, գրամայի և գեղարուեստի.
Հոմերոս	
Եսքիլէս	
Ֆիգիաս	

Սովորաբար
Պատան
Արքիմեդի
Արքիմեդի

Նախնի բնորոշումներն,
փրկողականությունը, քաղա-
քագիտությունը և չա-
փագիտությունը հայրերը:

Աղէքսանդր Մեծ
Յուլիոս Կեսար

Արեւելեան և Արեւ-
մտեան կայսրութեան
հիմնադիրները:

Ս. Պողոս
Ս. Օգոստինոս
Ս. Բենեդիկտ

Բարձրագոյն ներկայա-
ցուցիչներ քրիստոնէա-
կան աստուածաբանու-
թեան, եկեղեցական իշ-
խանութեան և կրօնաւո-
րութեան:

Կարլոս Մեծ
Ալֆրէդ Մեծ
Լուդովիկ Թ.

Բարձրագոյն ներկայացու-
ցիչներ միջնադարեան
գիտութեան և կրօնական
պետութեան:

Դանթէ
Շէկսպիր
Կալդերոն
Մոլիէր
Գէթէ

Բարձրագոյն ներկայա-
ցուցիչներ Իտալական,
Անգլիական, Սպանական,
Փրանսական և Գերմա-
նական բանաստեղծու-
թեան:

Միքէլ Անջելո
Ռաֆայէլ
Մոցարտ

Ժամանակակից քանդա-
կագործութեան, նկար-
չութեան և երաժշ-
տութեան հայրեր:

Գոլուբոս
Գուտենբերգ
Փրանկլին
Ուատտ
Ստիֆենսոն

Նոր ժամակի ամենամեծ
գիտեր անդերը:

Գեկարդ
Քրանսֆիլդ
Կանդ
Կոնդ

Արդի փրկողական
գաղութների գլխավոր
հիմնադիրներ:

Լուտեր
Վիլհ. Լուկեաց
Բիշոփ
Կրոմվել
Պետրոս Մեծ
Վաշինգտոն
Քրիզիստոփոր Կոլումբ
Լինկոլն

Գերմանական, Ֆրանսի-
ական, Անգլիական, Ֆր-
անսիական, Ամերիկա-
կան և Իտալական արդի
պետական մեծ կազմա-
կերպութեան հիմնա-
դիրներ:

Գալիլէյ
Նիւտոն
Լավուազիէ
Վոլտա
Փարեյս

Ժամանակակից գիտու-
թեան, Աստղագիտու-
թեան, Բնագիտութեան,
Քիմիայի, Եւթարագի-
տութեան ներկայացու-
ցիչներ:

Անթրոպոլոգ

ՀԱՅԵՐԻ ԿԻՐԱՆՈՒ ՎՐԱՑ ԹԱԳԱՆՈՐՈՒ-
ԹԵԱՆ ՄԵՋ.

Վրաց «Քարթլի» ծառայողները կոչ-
ուած հին տարեգրութիւնը, որ ժը դա-
րու սկզբում Վախթանգ Զ-րդ գիտնական
օրէնսդիր թագաւորի խմբագրութեամբ

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ԻՆՉՊԵՏ ԵՆ ԽՆԱՄՈՒՄ ԽԵՆԹԵՐԻՆ
ԱՄԵՐԻԿԱՅԻՆ

Միտքերը—Նահանգներում իւրաքանչիւր
նահանգ այդ նահանգի խնդիրներն և զանազան
աստիճանի մտքով ցնորուածներին խնամելու
համար ունի իր առանձին խնդիրները: Բոլորն
էլ կրում են նոյն հասարակ անունը—«State
Hospital for the Insane»—Պետական հիւանդա-
նոց խնդիրների համար: Այս խնդիրներին
թիւր կարող է լինել մէկ, երկու, կամ աւելի
նայած նահանգի մեծութեան և բնակչւնքի
թուին:

Բոգ—Այլեւհը լինելով փոքր նահանգների
չարքում ունի միայն մէկ խնդիրներ: Այստեղ
մէկ տարի պաշտօնավարելու բաղձն է ունեցել:
Մասնաւորապէս այս խնդիրներն և նրա մէջ
եղողների մասին է, որ ուզում եմ մի քանի
խօսք ասել: Բուժելու, դարմանելու մեթոդը
ընդհանրապէս նոյնն է բոլոր Պետական խն-
դիրներում էլ: «Պետականը» չեղում եմ, ո-

զգալի փոփոխութեան է ենթարկուել: Հա-
զէս է գալիս մի առաջնական պատմ
ուածքով. որի համաձայն հայերն ու վը-
րացիներն իրենց նախնական ծագումն ու-
նում են Ալյա և Քարթլուս անուանուած
երկու հարազատ եղբայրներից, որ Յա-
րէթի շնորհիւ ժամանակներից մէկի՝ Թոր-
գոմի որդիներն էին: Եթե խորքը դարձնեն
վերագրում Վրաց ժամանակագրութեան
մէջ գտնուող այս ներածութիւնը յօրին
ուած է Մովսէս Խորենացու յմանողու-
թեամբ, որի հեղինակութիւնը նորագոյն
հետազոտութիւններով դեռ այն աստիճան
էլ երբեք չէ. որպէսզի նրա հաշակա-
ւոր «Հայոց Պատմութիւնը» համարուի
յետագայ դարերում զանազան, երբեմն
էլ կասկածելի, բնիկ և օտարագրի աղբիւր
ներից կազմուած մի արուեստական ժո-
ղովածու: Լեզուաբանութիւնն ու մար-
դարանութիւնը հայերի և վրացիների
այս մի ընդհանուր բնութեան նահագի-
տից յառաջանալու գաղափարը, ներկայու-
մըս միանգամայն հերքում է: Այս գաղա-
փարը կազմուել է քրիստոնէական հայ-
եացքների ազդեցութեան ներքոյ և իւ-
րացուել է Հայոց Պատմութեան հօր ու
վրաց կեղծ վախճանի ժամանակագրու-
թեան խմբագրի կողմից: Հայերը ինչպէս
համեմատական լեզուաբանութիւնը հաս-
տատում է, պատկանում են ցեղերի շնոր-
հաւերական խմբակցութեանը, մինչդեռ
վրացիների համար, որոնք արդէն սահման-
ուած արիական, սեմական և թուրան-
կան լեզուների ընտանիքներից ոչ մէկի
հետ յարակցութիւն չունեն, գիտութիւնը
որոշել է մի բնութիւն տարբեր այսպէս
անուանուած ռեբրսկան խմբակցութիւն:
Բացի սրանից, մարդաբանական հետազո-
տութիւնները կս ապացուցանում են, որ
հայերն ու վրացիները, քննութեան առ-
նելով նրանց հասակն ու գահը, պատ-
կանում են Կովկասեան կամ Սպիտակ ցե-
ղի միանգամայն տարբեր տիպերի:

Սակայն և այնպէս այս առաջնակը,
որ հայերին և վրացիներին շարկապում է
ցեղական ընդհանուր կապերով և որ ծը-
նուդ է առել ժէ. դարում, ունի իւր
պատմական նշանակութիւնն ու
բացատրութիւնը: Այս պատմական
առաջնակը, որ յառաջացել է հայերի
և վրացիների ժամանակակից փոխադարձ
յարաբերութիւններից, ակնյայտի կերպով
ցոյց է տալիս, որ Արեւելքի այս երկու
հնագոյն ազգերը, աւելի քան հազար
տարուայ ընթացքում ապրելով Անդրկով-
կասեան երկրում՝ ունեցել են միասնական
կեանք, բարեկամական յարաբերութիւն-
ներ և ընդհանուր շահեր: Պատմութիւնը
ցոյց է տալիս շատ անգամ, որ իրենց
առաջնակ կազմում է ոչ թէ յանուն ա-
պագայ իրենցների, այլ այն նպատակով,
որպէսզի վաւերացուին դարերի ընթաց-

քում սահմանուած ներքին կեանքի պայ-
մանները, ժողովրդական սովորութիւններն
ու աշխարհահեացքները: Ահա այն պատ-
մական կեանքը, ճանապարհը, որի վրա-
յով անցել է Վրաստանը, բարեբար նիւթ
է մատակարարել այս առաջնակի ծննդեա-
նը: Վրացիների Հայաստանի հետ ունե-
ցած քաղաքական և կրօնական յարաբե-
րութիւնները վերջինիս ինքնակալութեան
թափանցանքները, հայերի
գաղթալի տեղափոխութիւնը դէպի Վը-
րաստան սկսած է. դարուց մինչև մեր
ժամանակները, Պարսկաստանի և Տաճկա-
ստանի հետ ունեցած տնընդհատ ընդհա-
րուածները և զանազան կենսական փոփո-
րկներն այս երկու՝ ծագումով բոլորովին
տարբեր, բայց անցեալ դարերի յիշատակ-
ներով կապուած ու միևնոյն չափով հա-
լածուած ազգերին լծել, մտցրել են ան
խուսափելիօրէն մի պատմական լծի տակ:
Մարդկանց կամ ազգերին ոչ մի բան
այնքան չէ միացնում, որպէս ընդհանուր
գոթախտութիւնը: Վրաստանի և Հայաս-
տանի պատմութեան էջերը լի են ժողո-
վրդի արիւնիայից տանջանքներով, աւե-
րուածներով, հրդէհներով, այրուած դաշ-
տերով և սոքի տակ տուած սրբավայր
ներով:

Լ. Գեորգեան

(Ձառուակելի)

ԲԱՆԱՍՏԵՂԾ Յ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

(30 ամեայ լոբելիանի առթիւ)

80 ական թուականներն էին. հայ-
կական Պառնասը աւերակի տպաւորութիւն
էր թողնում, ամալացել էր: Վաղուց, շուտ
լուել էր ազատութեան մարմնացումն,
ընթացումն ինքզին Նալբանդեանը, Բակու-
նիները, Օգարները, Գեորգեանները ու
Մաճինները սէրն ու համակրանքը վա-
րկալ անհանգիստ ոգիք: Չարքել ու փշրել
էր իր հոգեշունչ քնարը և երգուել դուրս
գալ դէպի հրապարակ առանց քնարի,
անգարդ խօսքերով՝ պատերազմելու ընդ-
դէմ ամեն ինչ՝ մաշող, խեղդող խաւարի:
Ձէին հնչում նաև քաղաքացի բանաս-
տեղծ Ս. Շահազիզի քնարի լարերը. մի
արեգակնային տարուայ ըմբռնում տա-
րօրիակ բեղմնաւորութեամբ տոգորուած
լոյս աշխարհ հանելով «Լեւոնի վիշտն»
ու պատկառելի թուով այլ և այլ ոտա-
նաւորներ, լուսնի էին կարծես այդ թըր-
թուին լարերը և երկարամեայ ամուս-
նութեան դատապարտուել: Երբեմն միայն, որ-
պէս նշան հայ մուգանների կենդանութեան՝
սլանում էին հայկական պառնասի մա-
ռախալապատ քաղաքից հրապարակախօսա-
նաւոր Ռ. Պապկանեանի ահեղաշունչ
մարտակոչ հրաւերներն ու հեգնութեան՝
թոյնով թաթաղուն սուր սլաքները և
խորը խոցում առանց այդ էլ վերաւոր

ունց ձեռնարկի էլ: Մի սամավար դեղը շատ
հեշտ բան է երեւում, բայց չիմացող՝ ջուրը
լցնում է կրակի տեղը. այս զուարճալի դէպքը
ես տեսի եմ Քրդիստանում: Այս էր պատճա-
րը որ ես ցանկանում էի մի առ ժամանակ ծա-
ւայելու և մի խնդիրներում մտային ուղեգա-
լին հիւանդութիւնների դարմանելու (psychiatry)
մօտիկից ուսումնասիրելու համար, և որքան
մեծ եղաւ իմ ուրախութիւնը երբ մի քանի օր
փոստ բերեց մի նամակ, որով Բոգ-Այլեւհի հի-
ւանդանոցի տեսուչը առաջարկում էր ինձ մի
պաշտօն՝ ծառայելու որպէս ներքին բժիշկ
(Interne) իր հիւանդանոցում:

Հեւալով ընդունեցի առաջարկութիւնը
որ մի գուցէ նամակս ուշ հասնէ— և հենց այդ
օրը երեկոյան զնացք նստեցի: Ամբողջ դիւրեր
պէտք էր ճանապարհորդել: Բայց ինչն է ինչ
անցնում մարդու: Ինչ պիտի անեմ այդքան զը-
ժերի մէջ, մոտուած էի ես, ինչպէս պաշտպա-
նում եմ իմ քանիսը միասնա ու յարձակուեն
վրաս (չէ որ նախապաշարուած գաղափարներ
ունէի նրանց մասին), եայլն, եայլն, այսպէս
մտաբար յոգեցի և քնեցի: Լուսարացին զը-
նացքը կանգ առաւ և կոծկուկտօրը իր խըր-
պտ ձայնով բղաւն կայարանի անունը—«Հո-

ստերը: Սակայն բոլորն էլ կոչուած չէին
ընդգրկելու այդ մարտական մահասար-
սուռ ուղին. կային լուս միտացողներ ևս:
Ժողովրդի մի հոծ բազմութիւն իր ծովա-
ցած վշտերի թախծալի տրտալայտիչն էր
որոնում, սգաւոր երգչին էր սպասում:
Եւ ահա Լազարեան ճեմարանի պատերից
դուրս են թռչում «Լեւոնի վշտի» գաղա-
փարներով սնուած և ապագայի հետաւոր-
կարներով թեւ առած մատաղ երգչի—
Յ. Յովհաննիսեանի քնարի թրթուռն լա-
րերի հնչիւնները: Թուած էր, թէ Շա-
հազիզի քնարն է իջեցրած պատից, այն-
քան նման, այնքան հարազատ... Մատա-
ղահայ երգիչը, իր ուսուցչի նման, խորո-
վում ու մկրտուած էր հեռու հիւսիսում,
հայրենիքի կարօտով իր հոգի ու փար-
թամ բուսականութեամբ:

«Տեսել ես արեօք այն բլուրները,
Աւր ճոխ ծաղկում է մշտական գարուն,
Կանաչում թաղուած այն սլաքները,
Աւր իբրեւ գոհար խաղողն է հասնում:
Բարեբախտաբար, երիտասարդ երգ-
չին վիճակուած չէր իր ուսուցչի նման
երկար ու ձիգ տարիներ ապրել ու
գործել օտար երկրի տակ, հեռու սիրե-
լիներից, կտրուած մտերմներից: Մոռվա-
լի համալսարանն աւարտելուց լետոյ՝ նա
վերադառնում է հայրենիք—Վաղարշա-
պատ և այնուհետև նորիւմ իրեն հայ
մանուկ սերնդի կրթական—գաստիարակ-
չական գործին: Տասնեակ տարիներ գոր-
ծում է բանաստեղծը որպէս ուսուցիչ
հայկական անշնորհակալ և դժեղակ իրա-
կանութեան ծոցում, անցնում է այդ տա-
ռանկոտ, փշալից ուղին, կրում այդ ծանր
խաչը: Գարծես իրեն և նման վիճակում
գտնուողների համար են դուրս թուել բա-
նաստեղծի վշտակէզ սրտի խորքից

«Ախ, ես գիտեմ. թշուառ եղբայր,
Ծանր է խաչը տկար ուսիդ.
Ճակատագիրն, իբրեւ խորթ մայր,
Ձէ ժպտացել դեռ երեսիդ:
«Գիտեմ, վաղուց ես դու սովոր
Անցնել անքուն, երկար գիշեր...»
Բանաստեղծը սիրայօժար կրում է
այդ ծանր խաչը. նա սիրում է իր գործը
նա նուիրում է այդ սուրբ գործին, մա-
նաւանդ որ նա յուսում և հաւատացած
է, որ «կը գալ օր—

Բաղդը երազ չի թւիլ մեզ...
Թէ կըցամքի դառն արատաւը,
Լոյս կը դառնայ այս սև գիշեր,
Կը փարատուեն կսկիծ ու սուտ
Կը գալ Մայիս շընորհաբեր»:
Սակայն, 6 ամեակութիւն ու միամը-
տութիւն. վարդագոյն յոյսերին ու վառ
ակնկալութիւններին փոխարինում է չոր
ու ցամաք, անողոր իրականութիւնը. բա-
նաստեղծը ստիպուած է լինում թողնել իր
սիրած ապարէզը:

Բայց մեզ հետաքրքրողն ու զբաղեց-

վնդը: Վերակի առաւօտ էր, դեղեցիկ և փայ-
լուն տաւառ, որ ես հասայ հիւանդանոց: Նա-
խաճաղ տեսի և իր ընտանիքի հետ անելուց
յետոյ՝ տեսաւ ծանօթացրեց ինձ հիւանդանո-
ցի տափին—միւս բժիշկներին, որոնցից կրտսե-
րագոյնը պէտք է ինձ ման ածէր և ծանօթաց-
ներ ինձ իմ միջավայրին և իմ պարտաւորու-
թիւններին:

Այս նահանգում որքան խնդիր ու ցնոր-
ուածներ լինեն՝ բոլորն էլ բերում են այս խն-
դանոցը: Եթէ պատահում է, որ մէկին տանում
են մի ուրիշ—թէկուց հարկան—նահանգի խն-
դանոցը, այդ խնդիրները նրան չի պահում:
Կէտք է խնդիր մենդալայր նահանգի հոգ
տանէ նրան. նրան վերադարձնում են իր նահանգի
խնդիրները: Մենք էլ, եթէ մեզ մօտ բերում
էին մի խնդիր որ մեր նահանգի բնակիչը չէր,
յետ էինք ուղարկում իր նահանգը: Օտարական
դէպքում պէտք է պահուէին այն նահանգի խն-
դանոցում, ուր նրանք ապրելու են եղել ամենից
երկար:

Իր. Յակոբ Մել. Վարդանեան

(Կը շարունակուի)

նոգն ալժմ ոչ թէ Յովհաննիսեանի մանկավարժական, այլ բանաստեղծական գործունէութիւնը պէտք է լինի, որին և կանցնենք հետեւեալ անգամ:

Նորայր

ՋՐԱԿԱԼԱՍՈՒ ՈՒՂԵՂՆԵՐ

Դեռ չմոռացած Գեկտ. 13-ի կաթուղիկոսական խալատակ ընտրութիւնը իր տխուր պարագաներով և չազատուած նրա ծանր կոշմարից, դժբախտութիւն ունեցանք այս վերջերս պատահմամբ ջատագովութիւններ կարգաւ բռնութեամբ կատարուած այդ ազգամերժ ընտրութեան և բարձրագոյն կրթութիւնից զուրկ, անձեռնհաս, հայ քայքայուող եկեղեցոյ ժամանակակից ու անյետաճգի կարիքներին իսպառ անտեղեկ, անտարբեր և անհամապատասխան ընտրելիք—տեղակալ Սուրենեանի—հասցէին:

Ինչ խօսք, որ բռնութեան և անձեռնհասութեան ներքոյնաներ՝ նուիրողները կրկին մեր տաճկահայերի սրտը և երկեղի խաւերէն, որոնք վաղուց սովոր են երկաթեայ բռնակցութեամբ համարելի և իրենց ճակատին դնել:

Բայց մենք ամենեւին չէինք սպասի, որ այդ ստորաբարձների շարքում կոտորենէնք նոցա, որոնք իրենց մի առանձին ապովածով լայտարարում են եկեղեցոյ բարեգործութեան կուսակիցներ, ու խրմբուել են Պոլսում հրատարակուող «Տաճար» կոչուած կրօնական շաբաթաթերթի շուրջը:

Երբ կրօնաւորութիւնն ինքը կեղծիքներ է դարձնում ու ծաղրում իւր ուխտը, երբ նա իւր չճանաչած և անկարող մարդուն հռչակում է իբրիւր ժանապէս ընտրելու (?!!) և երկակայական «բարեմասնութիւններ» տէր մէկը, էլ ինչու զորմանալ, որ աշխարհական դասը երես է դարձնել և դարձնում մարդնեկեղեցուց, որ ծաղրում է կրօն ու կրօնաւորները և հետզհետէ անտարբեր դառնում դէպի այն նահատակ և պանծալի եկեղեցին, որի շուրջը հաւատարմութեան և մարդոտութեան ամենասուր և զազանի պրօպագանդով են գրադուած Քրիստոնէաներից նորէն Եր Քրիստոս Յիսուս եղբայր շահողները, յանուն Քրիստոսի տաքուկ ու փափուկ ապրող օտար միսիւնները:

Բացէք «Տաճար» № 49 (էջ 787) և կարդացէք Ազգային կեանք» վերնագրի տակ ելող դրուատիքը, արդէն «Վեհ. Տ. Տ. Գէորգ Ե. Սուրենեան կաթուղիկոս ա մենայն հայոց» հռչակած անշուք և անկամ անձի հասցէին: Ինչէր չէք գտնի այնտեղ: Պահ մի դուք էլ ափ ի բերան կմնաք և կսկսէք հիանալ այն անձով, որին երկինք են բարձրացրել, անշուշտ, բնաւ Սուրենեանին չտեսած, մօտիկից և բուն աղբիւրից տեղեկութիւններ չբաղած «Տաճարականներ»: Բայց այդ բոլորը գեղեցիկ ստեղծ են ինքնընտրի մի հոգեւորականի անուան, որին՝ հայութիւնը արատաւորող և բռնութիւնը սրբագործող մի կարգ մտաւորականներ քոյ է տուին (իրար խաբելով և «նորիցս նոր» թեմային արժանանալով), որ բարձրանալ առաքելասարան Լուսաւորջի գահը:

Բայց մենք դառնա՞նք մի քանի քաղ ուժաւորներ անելու «Տաճար» առաքելութեան թանկութիւնը «Վեհ. Տ. Տ. Գէորգ Ե. կաթ. ա. հայոց»-ի [!?!] հասցէին շալալած:

Սուրենեան եկեղեցական գործերու մէջ չինարար եղաւ... քահանայից վիճակը բարեբախտ ջանքեր ըրաւ... Ազգային և եկեղեցական շահերու թունդ պաշտպան եկեղեցականի իր նկարագրով անհաճոյ եղաւ Վալիցիին... 1902-ի վերջերս (եղբայրներից) դարձաւ Տփլիս... բայց երբ եկեղեց. կաթուածները գրաւուեցան, Տ. Գէորգ Արքեպ., ինչպէս բոլոր ուսանալ

կղերը, չհամակերպուեցաւ: Ռուս կառավարութիւնը ստիպեց զինքը իբրեւ ընտրու 1904 Յունի. Տ-ին

Բայց մենք և յայտնի կովկասցիները, որ առ տեղեւան գիտակ ու տեղեւան ենք Սուրենեանի ողջ և անփափա՞նակ գործունէութեան, ի խորաց սրտի և զայրուածութեամբ ենք. «Ան. տէ. Սուրենեան» է «Տաճար» և ժողովրդային ընթերցողներին ամենայն անբարեխղճութեամբ:

Այն «Տաճարական» «սուրբ հայրեր» ձեր վերագրեալները իրողութիւններ չեն և «արգարե» առաքելաց առաքելութիւնը էք մեզ թուել թէ արգեօք այդ ինչ չէինարարութիւն» [!], որ Սուրենեանը ցոյց է տուել «եկեղեցական» գործերու» մէջ:

Արգեօք այն, որ ձեռնարանական-համախառնական սրտացաւ հոգեւորականներին, անչափացեալ հակեկեղեցոյ բարձրացման ուխտանուէր այդ հովիւներին ըստ մեծախորհուրդ խորհրդականների խրատների, աշխատել է անգործունէութեան մատնել, որ անզուգական հետոք և ոսկեբերան Քենինկին, որ հրաշքներ կարող էր գործել որեւէ թեմում ժողովրդի հոգեկան և մտաւոր մակարդակը բարձրացնելու խնդրում, Պիղատոսական անմեղութեամբ թողել է քաշուի թիֆլիս՝ զբաղուելու հայ լեզուի և գրականութեան ուսուցչութեամբ բուսական դպրոցում, մինչդեռ նա այդ բանի համար աշխարհէի ուրաջել, նա դրա համար վեղար ու վերադառնալ չի հազել:

Արգեօք այն, որ իր նախկին տեղապահութեան օրերում յանցաւոր, դատաւարութիւն և աշտուղ դեր խաղաց ներսիսեան դպրոցի թալիֆայական հոգաբարձուների անտեղի պաշտպանութեան խնդրում և արժանացաւ «Վշակի» իրաւացի յարձակումների իբրեւ անպարտաճանաչ հոգեւորական: Արգեօք այն, որ քան տարիների ընթացքում մի քարոզ, մի կենդանի խօսք չխօսեց, որ գիտնայինք ինչն է դրա ալֆան և օմեգան:

Այն, այն. «Վեհափառ Տ. Տ. Գէորգ Ե-ի» շինարարական «մեծ» գործն այն է, որ նա խիզախ և քաջակորով նրանցի՝ հայ մեռնող եկեղեցին բարենորոգելու համար գրած լուրջ յոգնածը միջնադարեան անհամբերատարութեամբ կրակով ու մրկրատով դատեց և աւտօգրաֆէի ենթարկեց:

Եւ այսպիսի մի հայ Տփլիսեցի մարդ կաթուածահար ու ջրակալած ուղիները հռչակում են իբրեւ լեզու և կեանք մի. «խորունկ կրթասիրութիւն մը բառին ամենայն իմաստով»: Այլնի՝ արգեօք երբեւէ վախճան է հոսոսական այսպիսի արտառոց տրամաբանութեան:

«Բահանայից վիճակը բարեբախտ ջանքեր ըրաւ»: Իրաւ, «բաւալ»: Փնտրու: Կալ փաստ, բայց հակառակը խօսող: Անփառունակ իզմիրլեանի՝ մահուանից իտող, բազմութիւն քահանաներ, «Հովիտ» խմբագիր Տէր Եղիշին նախաձեռնութեամբ, պատրաստուած էին մի ժողով գումարել քահանայութեան դիրքն ու բարոյականը բարձրացնելու, բայց երբ բանը հասաւ տեղակալ Սուրենեանի թոյլտուութեան, այդ ժամանակ քահանաների իդըր գիպաւ էջմիածնական ժալոյի և ջուրն ընկաւ: Հայ քահանայութեան վիճակը բարեբախտ իդէալը իսկ այսպիսի մի մարդու մեր հոսոսները, առանց քաջուելու գրուած են՝ լայտարարելով «Բիդ մը եկեղեցականութեան» դիրքի բարձրացումը... [!]:

«Կայիցիներն» անհաճոյ լինելու փաստն էլ լաւ է միանգամայն լուրսութեան տալ եկեղեցական կալուածների գրաւման խնդրում, հայր «Տաճարականներ», ի՞նչ եղել են ուսումնական կղերներ, որոնք չեն համակերպուել Ռուս կառավարութեան պահանջին, լա՞նքնայն դէպս այդ քաջաբան դասի մէջ ամենեւին չի մտնում

ձեր գովաւանած «Վեհ. Գէորգ Ե-ը», որ այդ օրերում երկչոտաբար պիտի փակուած իր խցում, ոչ ոքի չէր ընդունում իր մօտ, խօսք ու կարծիք չէր փոխանակում ոչ ոքի հետ, որպէս զի կառավարութեան աշխարհի «ընթաց» կամ «անբարեխղճ» չնկատուի:

Այս լեզուաբանից բացի «Տաճար» խմբագրութիւնը մի «սիրալիր» էլ է աւելում «տառապեալ հայ ազգին»:

Ահա թէ ինչ. «Իր (Սուրենեանի) ուղղութիւնն եղած է ջերմ աւանդապահութիւն մը») հայ եկեղեցոյ կարգաց և կանոնաց, միեւնոյն ժամին ցուցնելով բարեկարգիչ ոգի մը» [?!]:

«Վերմ առանգապահ» և միեւնոյն առանձին «բարեկարգիչ ոգի» Աւանդապահը կարող է բարեկարգիչ լինելու Աւանդապահութեան եղբր ինքնին հերքում, մեր ժողով և բացասում է բարեկարգչութիւն հասկացողութիւնը: Սորա երկու տարբեր տարբեր և բնաւ համընդուն լինել չեն կարող միեւնոյն մարդու մէջ, իբրեւ իրար ծայրահեղութիւն բացատրող եղբր: Այդ առաւորապահ է նա ինքնին լամաւ պահպանողական է և Սուրենեանը տիպիկ յերկալայացուցիչ է այդպիսի պահպանողականների թշնամի բարենորոգչական շարժման, և այդ պատճառով իսկ մենք՝ և ողջ ուսումնասիրութիւնը չենք հաշտուում նրա կաթողիկոսական թեկնածութեան հետ և ուրախութեամբ ողջունում նրա չհաստատման մտին շրջող ամեն մի լուր իբրեւ մեծ աւետիս: Աւանդապահը եթէ և բարեկարգիչ լինէր, էլ ինչ աշխարհայնկոծող շարժումներ պիտի առաջացնէին Լուսեր (1517), Ֆիդիկի (1517) և Կալիկ (1536) իրենց բարեկարգչական և հակաաւանդապահական գործունէութեամբ: Սա արդէն Պոլսական տէրութեան նորանշան գիւտ է, որ արիւն և պատիւ՝ արեւելահայերից մերժուած Սուրենեանի:

Աւանդապահ և բարեկարգիչ, մտածել են թէ ինչ հակասական բան են գրել «Տաճար» պատուելի հայրեր: Սա նոյնն է, ինչ որ ասենք թէ՛ նոյն մարդը և՛ պահպանողական է և՛ իրեքբալ, կամ՝ և՛ հաւատացող է, և՛ անհաւատ. թէ՛ և՛ Ֆանատիկ է, և՛ համբերատար (տօնրանդ) ողոյտէր: Գոնէ մենք այսպիսի հայ հայոց չէինք կամենալ ուղղուէր Սուրենեանին, որի կաթողիկոսանալը չենք աղէտ և հայ եկեղեցոյ իսպառ կործանում ենք համարում, որովհետեւ մենք նրա «բարեկարգչական» ոգին տեսել ենք արդէն Նիւսանդի գիւղի կարգացած ինքնիշխանութեան լաւէտ աններելի դատովճառ մէջ:

Կր Եսրաւեանկուի Ա. Տ. Վ.

ԹՂԹԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ռաշտ 15 Դեկտ, Մեզանում չկայ հասարակական կեանք և ոչ էլ հետաքրքրութիւն՝ ըստեղծելու այդպիսի մի բան: Այստեղի հայ գաղութի կենդանութեան գլխաւոր երակը կազմում է վարակիչ դարձած թղթախաղութիւնը:

Այստեղում թուղթ խաղացողները բաժանուած են երեք կարգի. ա. Առաջին կարգի մէջ են վաճառականները և նրանց մօտ ծառայող «խնտեղիկներ» կոչուած գործակալները, մեծ մասամբ ամուսնացածներ:

Սորանք ամեն երեկոյ հերթով, այսօր մէկի, վաղը միւսի տունը հաւաքուելով բոլորում են թղթախաղի սեղանի շուրջը

1) Ընդունում մերն է
2) ..

և մինչև լոյս տաքացած անց կացնում իրենց «թանգ» ժամանակը: Այդ թղթախաղերը մեծ ծաւալ և երկար ժամանակ են առնում մանաւանդ ուրբաթ և լոյս կիրակի երեկոյները:

Անժամանակ, յաջած և անքուն տուն դարձող ամուսիններին բողոքով դիմաւորում են իրենց տիկինները: Կանանց բողոքն ու տրտուկ շարժումն արդեն է ունենում, որ նրանք էլ իրաւունք են ստանում իրենց ամուսինների պէս զբաղուելու այդ «անմեղ» մոլութեամբ:

Եւ ահա կանայք էլ սկսում են գիշերները լաճախել իրենց նոր «կուրսերը»: Տուն ու երեխայ այլևս աչքներին չեն զալիս: Դէհ, այդպէս է հասկացուում մեզանում լաւաշագործութիւնը:

Մեր նորակալակ տիկինները տունը աղախնի յուսով թողնելով, անգամ երկու ամսական ծծկեր երեխաներին, գոլգոլած զարգարուած և սրտատրոփ իրենց բջում են մագնիսական սեղանի առաջ: Այս երջանիկների թուում են գտնուում մեր հասարակական կարիքների հոգատարները և մատաղ սերնդի դաստիարակները:

բ. Երկրորդ կարգին պատկանում են արհեստաւորները և սրանց քարկահներն ու աշակերտները:

Սրանք առանց իրանց հաշիւ տալու և առանց խղճահարուելու իրանց շաբաթական վարձը մի գիշերուալ մէջ փչացնում են թղթախաղով, այս հիւրանոցից այն հիւրանոց մտնելով և անբարոյական կանանց հետ մի քանի ժամ ժամանակ անցկացնելով:

գ. Երրորդ կարգին պատկանում են վերին երկու դասից արտաքուստները, որոնք իրանց չափազանց անբարոյական և աշխարայ բասիկային կեանք վարելու պատճառով՝ զաղարել են լիշեալ երկու «բարձր» կարգերի մէջ մուտք գործելուց:

Սրանք իրենց կեանքը անց են կացնում օղեկաճառների գոլխաններում, որոնք լիշեցնում են Կովկասի քաղաքների խաւ անկեղծների դուխանները կամ խալիչեֆները:

Հասարակական ամենափոքր մասն է, որ գիտակցում է իւր գոլութիւնը, հեռու է պահում իրեն այդ կորստաբէր մոլութիւններից և զբաղուած է խաղաղ աշխատանքով և ընտանիքի ապագան բարոււնեքելու գործով:

Գ. Շանթեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Մուծամբար, 20 փետրվար. Հոգաբարձութիւնս ինկատի ունենալով գեղիս սերնդի կրթական գործի արդի աննախանձելի վիճակը, որանով խնդրում և կոչ է անում բոլոր պանդուխտ հայրենակիցներին և այն բարերար անձանց, որոնք իրենց սրտին մօտ կհամարեն գեղիս սերնդի կրթական գործը ուղարկեն գեղիս աղքատիկ զրաբարանի համար զբքեր, գլխաւորապէս՝ մանկական գեղատնտեսական և գեղարուեստական ուղղութիւններով:

Նուէրները կարելի է ուղարկել հետեւալ հասցէով՝

Թաւրեղում - Արշակ Տէր Յակովբեանի, իսկ Մուծամբարում Արշակ Գիւլիանի վրայ:

Մուծամբարի մի դասեան դպրոցի Հոգաբարձութիւն

«Միտք» լարգելի պ. խմբագրի

Սրտի անհուն բերկրանք ստացալ Ձեր շաբաթաթերթի առաջին համարը,¹⁾ որը իւր թեւերի վրայ է վերցնում իջնել

¹⁾ Տպում ենք անփոփոխ, մեր ջերմ նորահալութիւնը յայտնելով յօդուածագիր և համակիր պարոնին:

